Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

26 հոկտեմբերի 2021թ.
ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Օհանյան, Ա. Լալայան, Վ.Մացակյան, Մ.Համբարձումյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ.Հունանյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	Տնտեսող լամպ /Led 38 վատ/	559680
2	Տնտեսող լամպ /Led 20 վատ/	1040000
3	Ներկ լատեքսային	240000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 22.10.2021 թ.-ին ժամը 14:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 25.10.2021 թ.-ին ժամը 14:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	«Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ	ք. Երևան, Ավան Խուդյակովի 177/1
2	«Տոդոս Ակա» ՍՊԸ	ք.Երևան, Տիգրան մեծի 36
	«Լայթ Էքսպերտ» ՍՊԸ	ք Երեվան. Նալբանդյան 25/14, բն. 100
	«Լայթ ընդ Մոր» ՍՊԸ	ք.Երևան Աբելյան փ 6/1 շենք
	«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան Բաբաջանյան 43շ 15
	«Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ	ք. Երևան, Ավան Խուդյակովի 177/1
3	«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան Բաբաջանյան 43շ 15

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակիցներ	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ	470375	20%	564450	465671	20%	558805"2
2	«Տոդոս-Ակա» ՍՊԸ	733333,34	20%	880000	398000	20%	477600
	«Լայթ Էքսպերտ» ՍՊԸ	456000	20%	547200	428640	20%	514368
	«Լայթ ընդ Մոր» ՍՊԸ	486667	20%	584000.4	486667	20%	584000,4
	«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ	840000	20%	1008000	840000	20%	1008000
	«Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ	1433350	20%	1720020	1433350	20%	1720020
3	«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ	198000	20%	237600	198000	20%	237600

Աճուրդն ամփոփվել է 25.10.2021թ-ին և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ն, 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է համարվել «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է համարվել «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ Համակարգի կողմից 1-**ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝**

- Հաշվի առնելով,որ մասնակիցը համարվում է ոչ ռեզիդենտ, ուստի փաստաթղթերը ներկայացվում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով /ներառյալ իրական շահառուների մասին հայտարարագիրը Հավելված 1.2, Հավելված 1"3/ համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.19 կետի.
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի <<արտադրողի անվանումը>> սյունակում հստակ նշված չէ առաջարկվող ապրանքի արտադրողի/արտադրողների/ անվանումը և կազմակերպաիրավական ձևը"
-առաջարկվող ապրանքի <<տեխնիկական բնութագիր>> սյունակում ապրանքի բնութագիրը հստակ չէ՝ մասնավորապես լուսատվության չափը, երաշխիքային ժամկետը և ապրանքի չօգտագործված /նոր/ լինելու հանգամանքը
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 1"3"2 , 4"3"2, 4"3"3"կետերը ենթակա են շտկման"
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 4.4 բաժինը չի լրացվում, համաձայն հայտարարագրի լրացման կարգի, քանի որ անձի հաշվառման հասցեն և բնակության հասցեն նույնն են:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 4.5/ա/, 4.5.1, 4.7.1 և 4.7.2 կետերը լրացված չեն:

2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես

- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի <<արտադրողի անվանումը>> սյունակում հստակ նշված չէ առաջարկվող ապրանքն արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը,
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի <<տեխնիկական բնութագիր>> սյունակում ապրանքի բնութագիրը հստակ չէ, մասնավորապես երաշխիքային ժամկետը և ապրանքի չօգտագործված /նոր/ լինելու հանգամանքը
-Մասնակցի կողմից հայտին չի կցվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /Հավելված 1.2 կամ Հավելված 1.3/:Համաձայն հայտարարագրի լրացման կարգի՝ հայտարարագիրը անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր շահառուի մասով առանձին:

3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես

-Ընթացակարգի Հավելված 1-ով /դիմում-հայտարարություն/ նախատեսված աղյուսակում լրացված չէ իրական շահառուների մասին տեղեկատվությունը
-Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի <<արտադրողի անվանումը>> սյունակում հստակ նշված չէ առաջարկվող ապրանքն արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը .
- Առաջարկվող ապրանքի <<տեխնիկական բնութագիր>> սյունակի 4-րդ և 6-րդ նախադասությունները ենթակա են հստակեցման .
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելվածի 1.2-ի 1.3.3 կետով նախատեսված ստորագրությունը պետք է լինի էլեկտրոնային թվային ստորագրություն, համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.19 կետի.
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելվածի 1.2-ի 4.1.5 կետը ենթակա է շտկման.
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելվածի 1.2-ի 4.4 բաժինը չի լրացվում, համաձայն հայտարարագրի լրացման կարգի, քանի որ անձի հաշվառման հասցեն և բնակության հասցեն նույնն են
-Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելվածի 1.2-ի 4.5 բաժնով նախատեսված տեղեկությունները լրացված չեն
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելվածի 1.2-ի 4.7.1 և 4.7.2 կետերը լրացված չեն

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 27.10.2021թ.-ին նիստը կասեցնել ՝ Համակարգի միջոցով ծանուցել 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Դանինի» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ին, և 3-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:
Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 29.10.2021թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. 29.10.2021թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 29.10.2021թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ «Դանինի» ՍՊ Հայաստանյան մ/ճ–ն, «Տոդոս-Ակա» ՍՊ և «Ֆասթ Բիլդ» ՍՊ ընկերությունները սահմանված ժամկետում ներկայացրել են շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ի հայտը գնահատել անբավարար շտկման տրված դիմում հայտարարությունը հրավերի պահանջներով սահմանված կարգով չներկայացնելու հիմքով, մասնավորապես շտկված դիմում հայտարարությունը ներկայացվել է որպես ՀՀ ռեզիդենտ հանդիսացող անձ, սակայն չի հաստատվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

29.10.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ի -ի հայտը մերժել: Առաջին չափաբաժնով գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած:

2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ -ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

Համակարգի կողմից 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ի հայտը մերժվել է նախահաշվային գնի գերազանցման հիմքով:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում 2-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, իսկ 3-րդ չափաբաժնով Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Հարություն Օհանյան

_____ Անժելա Լալայան

_____ Վահան Մացակյան

_____ Մարիամ Համբարձումյան

քարտուղար _____ Կոմիտաս Հունանյան